ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԱ՝ ՁՈՒՐԸ ԳՅԻՐ

ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2015, № 30 БАРЕГОРЦ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՄՈՒՆՔԻ ՓԱՌԱՏՈՆԸ[a] ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՇՈՒՇԻՈՒՄ

Արցախի մշակութային մայրաքաղաքը[a] վերականգնվող ու օրեցօր գեղեցկացող Շուշին, արդեն չորրորդ անգամ դարձավ համահայկական մանկապատանեկան ասմունքի փառատոնի անցկացման վայր: Համահայկական ամենամյա այս մշակութային միջոցառումը, որ կազմ ակերպվում է ամերիկահայ բարերարներ Ալեք Բաղդասարյանի, Հայկանուշ Քոհերի, սփյուռքահայ ուրիշ բարեգործների նախաձեռնությամբ, ՀՀ սփյուռքի նախարարության, Արցախի կրթության և գիտության նախարարության, «Գուրգեն Մելիքյանի[a] Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» աջակցությամբ, այս տարի կայացավ օգոստոսի 17–21-ին: Նախորդ տարիների համեմատ ընդլայնվել էր մասնակիցների աշխարհագրությունը. Արցախի հինգ շրջաններից մասնակցում էր 34, Հայաստանից, Ջավախքից, ինչպես նաև ԱՄՆ-ից, Իրանից, Լիբանանից, Բելառուսից, Ուկրաինայից ժամանել էին 52 աշակերտ, ուսուցիչների հետ միասին[a] 126 հոգի:

Արցախի ԿԳ նախարար Սլավա Ասրյանը – փոխվարչապետ գեներալ Արթուր Աղաբեկյանը ողջունում են փառատոնի մասնակիցներին: Կենտրոնում ամերիկահայ բարերար Հայկանուշ Քոհերն է:

Մեծ խորհուրդ կա այն իրողության մեջ, որ աշխարհի տարբեր հորիզոններից, այս տարի ութ տարբեր երկրներից ու լեզվական տարբեր միաջավայրերից ժամանած հայ պատանիները հանդիպում են իրենց հայրենիքում՝ ազատագրված Արցախում ու նրա մշակութային կենտրոն Շուշիում: Մի քանի օր տևող այդ փառատոն-միջոցառումը Շուշիում ու Արցախի գեղատեսիլ բնության մեջ, պատմամշակութային վայրերում, վերածվում է հայրենագիտության ու հայրենաճանաչողության անմոռաց «բաց դասի», որն անցնում է բացառիկ ջերմ մթնոլորտում: Եվ, ինչպես պրոֆ. Գ. Մելիքյանն իր ելույթում ընդգծեց, Արցախ ժամանած հայ բոլոր երեխաները դառնում են նրա զինվորները, նրա ճակատագրի ապագա կերտողները:

Հայրենի հողի վրա հայ գեղարվեստական խոսքը, մանավանդ Զաքար սարկավագի գլխավորած երգչախմբի[a] նախերգանքի պես հրաշալիորեն հնչող[a] կոմիտասյան երգերի փառահեղ կատարումներից հետո, հոգեբանորեն ընկերացնում, մարդկայնորեն մտերմացնում է աշխարհի տարբեր հորիզոնականներում ապրող օժտված պատանեկան հասակի հայորդիներին, նրանց կապում Արցախի պատմությանն ու մշակույթին:

Ավելին, ապագա նորանոր հանդիպումների խոստումներով ու հեռանկարով արցախյան օրերին փոխանակվում են համակիրների հասցեները, անսպսելի իրար են հյուսվում մարդկային երազանքներ ու ճակատագրեր…



Փառատոնի կազմակերպիչ Ալեք Բաղդասարյանը հրապարակում է հաղթող մրցանակակիրների անունները և չնորհակալություն հայտնում բոլոր աջակիցներին, մասնակիցներին ու նրանց ուսուցիչներին:

Այս տարվա փառատոնը նվիրված էր Հայոց մեծ ողբերգության՝ թուրքերի իրագործած ցեղասպանության 100-ամյա տարելիցին կրում էր «Ցեղասպանություն-Վերածնունդ» խորհրդանշական խորագիրը: Ուստի նախապես տեղեկացված հայորդիներն իրենց ուսուցիչների օգնությամբ ընտրությունը կատարել էին հիմնականում հայ դասականների՝ արևելահայ ու արևմտահայ քերթողների ստեղծած հայոց եղեռնապատումի բանաստեղծությունից, ինչպես նաև եղեռնից հրաշքով փրկված մեր ժողովրդի՝ ի հեճուկս թուրք թշնամու՝ ապրելու և արարմամբ հարատևելու վճռական կամքը մարմնավորող քաղաքացիական քնարերգությունից՝ Սիամանթոյից, Դ. Վարուժանից, Ռ. Սևակից, Հովհ. Թումանյանից, Ավ. Իսահակյանից, Վ. Տերյանից, Վ. Թեքեյանից, Ե. Չարենցից, Հովհ. Շիրազից, Պ.

Սևակից, Հ. Սահյանից, Վ. Դավթյանից, Ս. Կապուտիկյանից, Գ Էմինից և ուրիշներից:

Դյուրին չէ աշխարհի տարբեր ծայրերից շուրջ հայյուր երեխա Արցախ ու Շուշի բերելը: Նրանցից ոմանք այստեղ էին հասել ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրի օգնությամբ: Շատերն էին միմյանց հանդիպում առաջին անգամ, սակայն «Շուշի Ավան-պլազա» հյուրանոցում նրանց մտերմությունն այնքան արագ ձևավորվեց, որ թվում էր՝ ոչ թե ճակատագրի չար ձեռքով աշխարհով մեկ սփռված, տարբեր երկրներից ժամանած հայության բեկորներ են, այլ մի բակի, մի դպրոցի, մի թաղի երեխաներ են կամ վաղուց իրար ճանաչող հարազատներ:

Որպես գնահատող հանձնախմբի անդամներից մեկը (իսկ այդ հանձնախումբը համալրված է բարձրակարգ մասնագետներով՝ նախագահ՝ ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյան, անդամներ՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, ՀՀ վաստակավոր մանկավարժ, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյան, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ Սամվել Մուրադյան, ԼՂՀ ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյան, դերասանուհի, Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի բեմական խոսքի ավագ դասախոս Մարինե Մխիթարյան, արևելագետ բանասեր - դերասան Աղասի Թադևոսյան, ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության լեզվի տեսչության պետ Արտակ Ղուլյան)՝ կարող եմ հավաստել, որ տարեցտարի բարձրանում է մասնակից աշակերտների ճաշակն ու կատարման վարպետությունը: Իսկ հայ բանաստեղծությունը հայրենասիրության ամենամեծ ու ներգործուն դասն է, որի դաստիարակիչ նշանակությունն անհնար է գնահատել:

Արցախում անցկացվող փառատոն-մրցույթը մշակութային մի շքեղ հանդիսություն է, որի բոլոր մասնակիցներն են հաղթող: Թեև տարիքային տարբեր խմբերում առաջին երեք տեղերը գրաված լավագույն ասմունքողներն ստանում են բարձրագույն մրցանակները, սակայն պարտվողներ չկան, քանզի բոլոր մասնակիցները, ստանալով կազմակերպիչների, Հայաստանի սփյուռքի նախարարության, Արցախի գիտության ու կրթության նախարարության, Շուշիի քաղաքա-պետարանի մշակույթի բաժնի թանկարժեք նվերներն ու պատվոգրերը:

Հաղթանակ է, անշուշտ, և այն, որ մի կողմից՝ ասմունքող պատանիներն իրենք, մյուս կողմից՝ Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցի հանդիսասրահում հավաքված ունկընդիրները լարված ու կլանված ըմբոշխնում են 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին տասնամյակներում թուրք բարբարոսների կողմից հայության ու մարդկության դեմ իրագործված անքավելի ոճիրի գեղարվեստական պատմությունն ու միլիոնավոր սրբադասված նահատակների ոգեկոչմանը, ի հեճուկս թուրք թշնամու՝ հաղորդակցվում են լիակատար բնաջնջումից հրաշքով մազապուրծ հայության վերածննդին ու ապրելու համառ տենչով հարատևելու կենսահաստատ ուժին, մյուս կողմից՝ պատանի ասմունքողները խորանում են խոսքարվեստի գաղտնիքների կատարողական նրբությունների մեջ՝ աստիճանաբար կատարելագործելով, վարպետության հասցնելով իրենց դեռևս սիրողական ելույթները:

Նախորդ տարիների համեմատ՝ այս տարվա փառատոն-մրցույթի մասնակից բոլոր դպրոցականների ասմունքն էր գնահատելի, դա՝ նրանց ջանադիր ու բանիմաց ուսուցիչների ու հենց իրենց աշխատասիրության ու պատասխանատվության ցանկալի արդյունքն էր:

Ծագումով հիմնականում արևելահայեր՝ պատանիներն արտասանում էին թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ հեղինակների գործերը՝ կարծես ջնջելով մեր միասնական լեզվի երկու ճյուղերի միջև ժամանակի ընթացքում առաջացած բոլոր տարբերություններն ու սահմանները: Երկու դրսևորումներով էլ՝ արևելահայերեն-արևմտահայերեն, գրական հայերենը հնչում էր իր ողջ գեղեցկությամբ ու հուզական նրբերանգներով, թեև դյուրին չէ արևմտահայ չափածոյի ասմունքը: Այն պահանջում է լրացուցիչ որոշակի հմտություններ, հատկապես բաղաձայնական համակարգի հնչարտաբերության, բառերի շեշտադրության ու հնչերանգի, չափատողի – բանաստեղծական ամբողջական պատկերի ճիշտ արտաբերում՝ բացառելով մտքի կտրտվածությունն ու ապահովելով տողանցման սահունությունը:

Գեղագիտական վայելքը կատարյալ էր, թեև հնչում էին ցավի ու ցասման, ոճրագործության դատապարտման, տառապանքի ու ողբերգության, հատուցման ու պահանջատիրության, քաջալերության ու ազգային համախմբման կարգախոսներ, որոնք հայության հայրենաբաղձության, ոգու արիության, ազգային երազանքների իրականացման ու հայկական համամարդկայնության բանաձևումներ էին՝ նոր սերնդի ազնիվ շուրթերից հնչող:

Մեծ էր նրանց՝ գերազանց հանդես գալու ձգտումը: Նախորդ տարվա մասնակիցներից իրանահայ Սիսիան Սեփանյանը ավագների տարիքային խմբում երկրորդ մրցանակի էր արժանացել: Այս տարի եկել էր առաջին մրցանակ նվաճելու հաստատ վճռականությամբ: Եվ նա հասավ իր նպատակին: Սակայն հիանալին ու զարմանալին այն էր, որ նա ձայն խնդրեց: Թվում էր՝ շնորհակալության խոսք պիտի ասի, բայց նա հանդիսավորությամբ իր ստացած մրցանակը նվիրեց իր հոր մարտական ընկեր, Արցախը ազատագրած հերոսներից մեկի՝ վերջերս վախճանված Եռաբլուրում ամփոփված Վահե Շահմուրադյանի հիշատակին:

Փառատոն-մրցույթը կազմակերպված էր բարձր մակարդակով. նախապես խնամքով ու հոգածությամբ կազմված ծրագիրն իրականացվեց առանց ժամակարգի դույզն-ինչ խախտումների. նախաճաշը, ճաշն ու ընթրիքը՝ ժամանակին, տարիքային տարբեր խմբերի ասմունքը՝ ժամանակին, Արցախի տեսարժան վայրերով պտույտները, Շուշիի թանգարաններ այցելությունները՝ ժամանակին, մրցանակային առաջին տեղերը գրավածների եզրափակիչ համերգը՝ ժամանակին, վերջին օրվա երեկոյան խարույկը – նրա շուրջ մասնակիցների հրաժեշտի միջոցառումը՝ ժամանակին:

Չնայած օգոստոյան շոգին՝ խորհրդանշական խարույկը նոր ջերմություն էր հաղորդում իր շուրջը բոլորած, փառատոնի հրաշալի տպավորություններով հագեցած, Արցախի գալիքով ոգևորված ռոմանտիկ հայորդիներին, ովքեր օրվա խորհուրդն ըմբռնելով՝ ներառում էին և այլ թեմաներով բանաստեղծություններ ու սրտալի երգեի հիանալի կատարումներ: Կարծես իրականանում էր բանաստեղծական կարգախոսը՝

Մ՛խ, հայրենի քարի վրա
Լեզուն կտրած հավքն էլ կերգե

Եվ այս ամենը ժամացույցի ճշգրտությամբ կազմակերպում էր անձանձիր ու նվիրյալ մի մարդ՝ Ավան-Շուշի հյուրանոցային համալիրի տնօրեն Սարգիս Գալստյանը, ով ինչպես ժամանակին

արցախյան պատերազմում էր իրեն դրսևորել պարտաճանաչ հայ զինվորի պես, արդեն չորրորդ տարին բարեխղճորեն անընդմեջ ստանձնում է համահայկական ասմունքի մանկապատանեկան մրցույթ-փառատոնի անցկացման ողջ դժվարությունն ու պատասխանատվությունը: Նրա բարեխղճության վկայությունն է, որ չորրորդ փառատոնի վերջին հնչյունները դեռ չմարած՝ արդեն սկսել է ուրիշ հայ պատանիների համար եկող տարի անցկացվելիք հինգերորդ հոբելյանական փառատոնի նախապատրաստական աշխատանքները:

Ո՞վ գիտե՝ ո՛ր երկրներից են գալու և դեռ իրենց հայրենիքը չտեսած որքա՜ն հայ երեխաներ…

Մինչ նոր և էլ ավելի հաճելի հանդիպում Հայաստանի, Արցախի ու սփյուռքի հայ պատանիների հետ եկող օգոստոսին:

Գնահատող հանձնախմբի անունից՝

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ - ՆԱՄԱԿՆԵՐ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը», չնայած իր սուղ միջոցներին ու հնարավորություններին, օգնության ձեռք է մեկնում կարիքավոր ընտանիքներին – արժանավոր ուսանող երիտասարդներին: Անմասն չեն մնում նավերջին շրջանում պատերազմական աղետից տուժած սիրիահայ մեր եղբայրներն ու քույրերը: Նրանցից ոմանք աշխատանք են գտել Բերձորում, ոմանք ստացել են միանվագ անհատույց դրամական օգնություն:

Հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը ուսման ծրագրի շրջանակներում օգնում է նա-ուսման առաջավոր անվճարունակ ուսանողներին՝ գնել այդպես թեթևացնելով նրանց հոգսերը

Գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի անունով հոգաբարձության խորհուրդը ստանում է բազմաթիվ շնորհակալական նամակներ:

Ցպագրվող առաջին նամակն ուղարկել է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Տիգրանուհի Սարգսյանը, ում հիմնադրամի հոգաբարձության խորհրդի միջնորդությամբ ԵՊՀ գիտական խորհուրդը շնորհել է «Ստեփան Ալաջաջյան» կրթաթոշակը:

Երկրորդը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի 3րդ կուրսի սիրիահայ ուսանողուհի Անժելա Տերտերյանի իրոք հուզիչ նամակն է:

Երկու նամակներն էլ սիրով ներկայացնում ենք «Բարեգործի» մեր ընթերցողներին:

Նամակ 1

«Միշտ էլ ավա·ները կարծում են, որ իրենց անցյալը դաստիարակ կդառնա ապա·ա սերունդների համար: Ես էլ եմ այդպես կարծում. նոր սերունդը իր ներկայի մեջ ձ·փում է ավա·ների անցյալն իմանալով դասեր առնել նրանից»:

ՍՏ. ԱԼԱՋԱՋՅԱՆ

Արձակագիր, թարգմանիչ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ Ստեփան Ալաջաջյանը ոչ միայն մեծ ավանդ ունեցավ ժամանակակից հայ գրականության զարգացման գործում, այլև ես՝ որպես արդի երիտասարդության ներկայացուցիչ, վստահորեն կարող եմ ասել, որ նա եղավ մեր ժամանակների ամենամեծ դաստիարակներից մեկը, որը դեռ սերունդներ պետք է կրթի:

Ստ. Ալաջաջյանն իր գործունեությամբ ու ստեղծագործությամբ շատերի համար եղել և մնում է ոգեշնչման աղբյուր: Հաճախ եմ մտաբերում նրա «Անապատում» վեպի հետևյալ տողերը, որոնք կարելի է նաև յուրօրինակ կոչ համարել՝ ուղղված ընթերցողին, ինչու չէ, նաև արդի երիտասարդությանը. «Սովորիր. ինչ որ կա կյանքում, կա նաև գրքերում, և հաճախ ինչ չես գտնի կյանքում, կգտնես գրքերում»:

Սիրել գիրքը, ընթերցանությունը, սիրել աշխատանքն ու զբաղվել սիրելի գործով, և ամենակարևորը՝ լինել հայրենասեր՝ լավագույն օրինակը ցույց է տվել հենց ինքը՝ Ստ. Ալաջաջյանը՝ երբեք «չխոնարհվող եղեգը»: Պատգամներ, որ միշտ են արդիական:

Քչերին է հայտնի, որ մանսուրյանական փառահեղ երաժշտության ուղեկցությամբ նկարահանված «Կտոր մը երկինք» ֆիլմի կինոբեմագիրն ստեղծել է Ստ. Ալաջաջյանը: Ժամանակն արդեն իսկ ապացուցել է նրա մեծ դերը մեր գրականության ու մշակույթի պատմության մեջ:

Շնորհակալական այս նամակով նախ և առաջ ուզում եմ երախտագիտությունս հայտնել նրանց, ովքեր հիմնել են ականավոր գրողի ու հանրային գործչի անվան այս կրթաթոշակը: Հավատացնում եմ՝ այսպիսի նախաձեռնությունների շնորհիվ ուսանողն իրեն ապահով և գնահատված է զգում և ավելի ինքնավստահ դառնում թե՛ ուսման բնագավառում, թե՛ կյանքի այլ ոլորտներում նոր քայլեր կատարելիս: Երբևէ չէի էլ կարող պատկերացնել և մտքովս անգամ չէր էլ անցնի, որ մի օր կարող եմ առնչվել Ստեփան Ալաջաջյանի շարունակվող ըստ ամենայնի հարուստ կենսագրությանը: Նրա անվան կրթաթոշակը, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհրդի միջնորդությամբ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը շնորհել է ինձ, հպարտությամբ կարող եմ ասել, որ, իմ ձեռքբերումը լինելով, պարտավորեցնող, զգաստացնող մեծ պատիվ է ինձ համար:

Շնորհակալությունս ցանկանում եմ ավարտել Պերճ Զեյթունցյանի հետևյալ խոսքերով. «Ստեփան Ալաջաջյանը սիրելի անուն էր և այդպիսին կմնա միշտ»:

Խորին երախտագիտությամբ՝

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի
երրորդ կուրսի ուսանողուհի

Նամակ 2

Իմ բառերը շատ քիչ ու տկար են արտահայտելու շնորհակալական այն խոսքերը, որ ունեմ իմ սրտում, որովհետև այն օգնությունը, որ ստացա «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից», ամբողջապես փոխեց իմ ամբողջ կյանքը ու ճանապարհս և տրամադրեց գալիքի հանդեպ հավատով:

Արդեն 30 տարեկան եմ, ամուսնացած եմ, ունեմ երկու զավակ, ուրիշ տեղից որևէ օգնություն չեմ ստանում: Բայց ուզում եմ սովորել, որ աշխատեմ ու ծառայեմ իմ ազգիս: Եվ քանի որ ժողովրդական իմաստությունն ասում է՝ «Խոսքը առանց գործի մեռած է», պետք է ծառայել նաև գործով:

Արդեն երրորդ տարին է, ինչ ուսմանս ծախսերը հոգում է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը բարյացակամորեն ինձ օգնում է հաղթահարելու դժվարություններն ու վանել հիասթափությունները:

Խորին շնորհակալությունս հիմնադրամի տնօրինությանը և անձնակազմին, որ որոշեցին ինձ օգնություն ցուցաբերել, ես ալ պարտաստ եմ օգնել ինչով որ պետք է և կարող եմ ընել:

Աստված ձեր բոլորին պահապան:

Թող մեր ազգի մեջ շատնան ձեր նման սրտացավ անձինք՝ ուրիշի կարիքին մարդկայնորեն արձագանքող և օգնող:

Շնորհակալությամբ՝

ԱՆԺԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
երրորդ կուրսի ուսանողուհի

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ԱՐԱՐՔ

Տարիներ առաջ Արցախի Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորից շուրջ 45 կմ հարավ գտնվող Ուռեկան գյուղը դեռևս դպրոց չուներ: Պահպանվել են Ուռեկանի այսօրվա դպրոցի տեղում եղած շենք հիշեցնող փլատակների լուսանկարները:

Բարեգործ հայ մարդու բարի հայացք ու սրտացավ հարազատի ձեռք էր պետք՝ գյուղն իր բնակիչներով կանգուն պահելու, դպրոցահասակ երեխաների ուսման ծարավը բավարարելու, այդ գյուղում առհասարակ մատաղ սերնդի կրթության գործը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

Պատերազմի ավերածություններից հետո վերականգնվող երկրի պետական սուղ միջոցներով հնարավոր չէր օրախնդիր այդ հարցի լուծումը: Գաղտնիք չէ մի հանրահայտ պարզ ճշմարտություն. դպրոց չլինի՝ էլ ի՞նչ գյուղ, ի՞նչ բնակչություն…

Սակայն բոլոր խնդիրներն էլ լուծում ունեն. բարի կամք է պետք և միջոցներ գտնաբերելու նպատակասլացություն:

Այս խնդիրը լուծվեց քուվեյթցի բարեգործ Կիրակոս Գույումջյանի բարեհոգությամբ ու պատրաստակամությամբ, ներդրած միջոցներով: Այժմ Ուռեկան գյուղն ունի բարեկարգ միջնակարգ դպրոց, որը կոչվում է բարեգործի հոր՝ Ցեղասպանությունից մազապուրծ Ներսես Գույումջյանի անունով:

Բարեբախտաբար, բարերարն իր գործը ավարտած չի համարում և շարունակում է շնորհակալության արժանի իր բարեգործությունը:

Դպրոցի աշակերտներն ու ուսուցիչները ամեն տարի Ամանորի նախօրյակին ստանում են տոնական նվերներ: Աճել է աշակերտների թիվը՝ 18-ից հասնելով 45-ի:

Ուռեկանի Ներսես Գույումջյանի անվան դպրոցի աշխատողներն ու աշակերտները դպրոցի տնօրեն Ա. Հակոբյանի և գյուղի համայնքի ղեկավար Գ. Մաթևոսյանի կողմից վավերացված երկու առանձին ցուցակներով, իրենց իսկ անձնագրերի համարների նշումով և ստորագրություններով ստացել են դրամական օգնություն:

Այդ ցուցակները թեև չենք հրապարակում, սակայն Կիրակոս Գույումջյանի ազգանվեր արարքն իրոք գովելի է և արժանի հիմնադրամի հոգաբարձության խորհրդի խորին շնորհակալությանը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ս Տ Ա Ց Վ Ա Ծ Օ Գ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Հ/հ	Ամսաթիվ	Ազգանուն, անուն	Նպատակը	Գումարը՝ դրամով
172	6.19. 2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Ռաֆիկ Թորոսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000
173	6.19. 2015	Մելիքյան Վահագն	Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Ռաֆիկ Թորոսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000
174	6.19. 2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Հենրիկ Արաբյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /14.01.2015/	20 000

175	6.19. 2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Հարություն Միրզոյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի/31.05..2015/	20 000
176	6.19. 2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի մայր Լարիսա Գաբրիելյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /28.05..2015/	20 000
177	6.19. 2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Ռևիկ Կորյունի Եզեկյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /30.05..2015/	20 000
178	6.19. 2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր Սամվել Ջաքարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /11.03..2015/	20 000
179	6.19. 2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ Չիրքինյան Նորայրի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /19.04..2015/	20 000
180	7.19. 2015	EXOIL TRADING SA CH/ UBS/ 0206-00168734	/REB?ZD81182T14168875//CHARITY	1643325.6 (3480 USD)
181	7.19. 2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ Չիրքինյան Նորայրի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /19.04..2015/	20 000
182	7.19. 2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ Չիրքինյան Նորայրի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /19.04..2015/	20 000
183	7.19. 2015	Մելքոնյան Ռուբեն RUBEN MELKONYAN	Օգնություն	50 000
184	7.19. 2015	Բոյախչյան Գոհար	Օգնություն ծառերի ծրագիր՝ «Վահագն Մահտեսի Հակոբյանց» պուրակի համար	50 000
185	7.19. 2015	Հակոբյան Անա	Օգնություն ծառերի ծրագիր՝ «Վահագն Մահտեսի Հակոբյանց» պուրակի համար	47 500
186	8.04 2015	ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ ՈՒՎԿ ՓԲԸ	HONDA CR V 2 41 ավտոմեքենայի ձեռքբերման վճար Ռուբեն Սասուն Մահտեսի Հակոբյանց ՀԱՋ Ռ. Հակոբյանի դիմումի առ 29. 07.2015	4775 000
187	8.04 2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ Հարություն Պետրոսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /19.04..2015/	20 000
188	8/05/2015	Ռուբեն Սասուն Մահտեսի Հակոբյանց	Օգնություն	45 000
189	8/05/2015	Շահնազարյան Հենրիկ	Օգնություն ծառերի ծրագիր	95 400
190	8/05/2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ Էմմա մայրիկի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /19.04..2015/	20 000
191	8/05/2015	Մելիքյան Գուրգեն	Tree project Ella Cohen – 400 USD	192 800
192	8/05/2015	Կյուրեղյան Վարուժ	Օգնություն ազատամարտիկ Ալեքսանդր Կուռեպինին	48 200
193	9/3/2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ գերմանահայ գործարարների միություն – 300 EUR	54 300
194	9/3/2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ Շուշիի համահայկական 4-րդ մանկապատանեկան ասմունքի փառատոնի մասնակիցների կողմից / Գուրգեն Մելիքյան, Ալեք Բաղդասարյան/	145 500
195	9/3/2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ մեծ հայրենասեր գեներալ Գուրգեն Դալիբալթայանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000
196	9/10/ 2015	Տեր-Պողոսյան Սուրեն	Օգնություն սիրիահայերին	145 500

197	9/10/ /2015	Մելիքյան Գուրգեն	«Ստեփան Ալաջաջյան» կրթաթոշակ՝ Թերեզա Ալաջաջյանի կողմից	485 000
198	9/10/ /2015	Խաջավյան Ժիրայր	Օգնություն ծառերի ծրագիր՝ «Վահագը Մահտեսի Հակոբյանց» պուրակի համար – 100 EUR	54 300
199	9/10/ /2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Վարդգես Սերոբյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000
200	9/10/ /2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն Ուռեկանի Ներսես Գույումջյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտներին և աշխատակիցներին - 3 000 USD	1435 500
201	9/10/ /2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ Հակոբ Գուլեջյան և Անահիտ Եգանյան - 300 USD	144 300
202	9/10/ /2015	Մելքոնյան Ռուբեն Հովհաննեսի RUBEN MELKONYAN	Օգնություն	50 000
203	10/10/ /2015	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի Ալեքսանդր Պետրոսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20 000
204	10/10/ /2015	Մելքոնյան Ռուբեն Հովհաննեսի	Փոխատվական գումարի հետ վերադարձ	400 000
205	10/10/ /2015	ShtelaPapayans	Book program, Papayans Famili Foundation – 700 USD	331 100
206	10/10/ /2015	Բաղալյան Սարգիս	Օգնություն ուսման ծրագրերին – 200 USD	94 600

Ընդամենը՝ 14296225,6

ԽԵԱ «ԿՈՎԵՐ» ԾՐԱԳԻՐ (շարունակություն)

Հ/հ	օգնություն ստացող ընտանիքը	բնակավայրը՝ Քաշաթաղի շրջ.	երեխա, թիվ	ստացած կովերը	հովանավորներ	ականջի N
249	Մարգարյան Սուսաննա (միայնակ մայր)	ք. Բերձոր	4	1-ին կով	Վահագն Մահտսի Հակոբյանց (Գերմանիա)	325092
250	Սահակյան Վահրամ Բաղդասարյան Աննա	ք. Բերձոր	4	1-ին կով	Մարիամ Ավագյան (Հոլանդիա)	325093
251	Ամիրխանյան Վեներա Հայրապետյան Վալերի	գ. Գողթանիկ	8	1-ին կով	Ագարակ	385097
252	Ավանեսյան Արտյոմ Խարգսյան Աստղիկ	ք. Բերձոր	4	1-ին կով	Ագարակ	325094
253	Աբրահամյան Լուսինե Ավագյան Արամ	գ. Գողթանիկ	6	1-ին կով	Ագարակ	325095
254	Սարգսյան Գայանե Ալեքսանյան Գեղամ	գ. Գողթանիկ	5	1-ին կով	Ագարակ	315004
255	Խաչատրյան Հայկանուշ Ավետիսյան Ալիկ	գ. Քարեգահ	4	1-ին կով	Վարուժան և Էմմա Կյուրեղյաններ (ԱՄՆ)	8477
256	Խաչատրյան Արմեն Խաչատրյան Մարիամ (բացառություն)	ք. Բերձոր	3	1 կով	Ստալիկ Պապյան (Երևան)	327682
257	Օսեյան Ավետիք Բեգոյան Ջոյա	ք. Բերձոր	4	1-ին կով	Հակոբ և Էնժի Թութունջյաններ (ԱՄՆ)	325004
258	Հովհաննիսյան Երազիկ Աբրահամյան Մարատ	ք. Կովսական	6	1-ին կով	Հակոբ Գույումջյան (Քուվեյթ)	1672
259	Ղարիբյան Անուշ Հեքիմյան Բագրատ	ք. Կովսական	6	1-ին կով	Ալֆա Ֆուդ Սերվիս ՍՊԸ (Երևան)	1692
260	Շաբոյան Վիրաբ Ասլանյան Աննա	գ. Նորշենիկ	12	1-ին կով	Կարեն Վանեցյան (Շվեյցարիա)	325060
261	Հովհաննիսյան Նոռա Բաղդասարյան Արթուր	ք. Կովսական	7	1-ին կով	Սամվել Սանամյան (Երևան)	1699
262	Խդրյան Չնաշխարհիկ Գալստյան Նվեր	գ. Մարեգահ	5	1-ին կով	Թոնի Ս. Կահվե (Անգլիա)	327360
263	Հայրապետյան Ալինա Սարգսյան Համլետ	ք. Կովսական	6	1-ին կով	Գրիգորի Մարգարյան (Երևան)	1671
264	Ալեքսանյան Գեղամ Սարգսյան Գայանե	գ. Գողթանիկ	5	1-ին կով	Սյուզան Դեր-Սահակյան (ԱՄՆ)	

265	Խամոյան Անի Ասոյան Գևորգ	գ. Մարեգահ	4	1-ին կով	Բալյան Ռաֆֆի և Փեղի (ԱՄՆ)	
266	Գոգորյան Կարինե Գրիգորյան Մխիթար	գ. Մուշ	7	2-րդ կով	Լևոն Հայթայան (ԱՄՆ)	
267	Մարգարյան Սուսաննա (միայնակ)	ք.. Բերձոր	5	2-րդ կով	Պետրոսյան Ալեն (ԱՄՆ)	
268	Բարսեղյան Մարինե Վանյան Շահեն	գ. Վարդուտ	6	1-ին կով	Խաչատրյան Աիդա, Չոբանյան Արամ (ԱՄՆ)	
269	Հակոբյան Ազնիվ Մկրտչյան Գագիկ	գ. Արտաշավի	5	1-ին կով	Նաջարյան Մերի, Նաջարյան Վարդգես (ԱՄՆ)	
270	Գասպարյան Լուսինե Ասլանյան Սամվել	ք.. Բերձոր	6	1-ին կով	Մարգարյան Ռուբեն, Մարգարյան Վալենտին (ԱՄՆ)	
271	Ավագյան Վիտալի Ավագյան Անուշ (փախստական)	գ. Հոչանց		1-ին կով	Չանչուրյան Էրիկ (Երևան)	
272	Միքայելյան Անդրանիկ Միքայելյան Ալինա	Վակունիս	6	1-ին կով	HakobiansGBR, Mars- La- Tour Str. 21, 26121 Oldenburg - Germany	
273	Թևանյան Սևինջ Ավագյան Դերենիկ	ք.. Բերձոր	4	2-րդ կով	Կյուրեղյան Վարուժ Կյուրեղյան Էմմա(ԱՄՆ)	
274	Հովոյան Անուշ Հովոյան Գրիգոր	գ. Հերիկ	7	1-ին կով	Վանեցյան Վերոնիկա Վանեցյան Կարեն ()	
275	Աճեմյան Լուսինե Գալուստյան Հակոբ	Տանձուտ	5	1-ին կով	Քուշերյան Կատյա Քուշերյան Վարդուհի (ԱՄՆ)	
276	Թովմասյան Ժենյա Օրդուբեկյան Սամվել	գ. Մարգիս	7	1-ին կով	Նաջարյան Մերի Նաջարյան Վարդգես(ԱՄՆ)	
277	Ասատրյան Քիստին Հովհաննիսյան Շիրազ	գ. Ներքին Սուս	4	1-ին կով	Ռոզմարի Հարությունյան –Քոհեն (ԱՄՆ)	
278	Ավետիսյան Աստղիկ Սարգսյան Համլետ	գ. Ներքին Սուս	4	1-ին կով	Վանեցյան Վերոնիկա Վանեցյան Կարեն (Շվեյցարիա)	
279	Աշկարյան Վահե լիբանանահայ	գ. Իշխանաձոր	4	1-ին կով	Քուշերյան Կատյա Քուշերյան Վարդուհի (ԱՄՆ)	
280	Հովսեփյան Ռիտա Խրշոյան Արայիկ	գ. Մշենի	4	1-ին կով	Քոհլեր Հայկանուշ (ԱՄՆ)	

Շարունակելի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք մեր հիմնադրամի բարեգործներին ու համակիրներին, «Բարեգործ» պաշտոնաթերթի բոլոր ընթերցողներին, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բա զ-մազավակ ընտանիքների հիմնադրամը» Արցախի Բերձոր քաղաքում ու հարակից տարածքներում հայտարարում է

ՀԻՇԱՏԱԿԻ ԾԱՌԱՏՈՒՆԿ

նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին և միլիոնավոր անմեղ զոհերին:

Ամեն ընտանիք կարող է ծառ տնկել նաև իր հանգուցյալների հիշատակին, ինչպես նաև՝ պսակադրության, զավակների կամ թոռների ծննդյան, նրանց, արեւշատության, մկրտության, տարեդարձի եւ այլ հիշարժան դեպքերի առիթներով:

Բերձորում ծառատունկ կարելի է կատարել ամեն տարվա մարտ - նոյեմբեր ամիսներին, հնարավոր է նաև ամռանը, քանի որ արմատակալ ծառերը նախապես դրված են թիթեղյա թաղարների մեջ և հողով կարող են տեղադրվել Բերձորի տարածքի նախատեսված պուրակում կամ առանձնացված այլ վայրում:

Ծառերի մասնագիտորեն էտումը, բուժումը, ժամանակին ջրելը, խնամքը և պահպանությունը իրականացնում են Արցախի Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքում բնակվող հմուտ այգեպանները, ովքեր Ձեր փոխարեն սիրով կկատարեն անհրաժեշտ բոլոր գյուղատնտեսական աշխատանքները:

Յուրաքանչյուր ծառի արժեքն է 100 դոլար, նրան համարժեք եվրո կամ ՀՀ դրամ:

Ցանկացողները կարող են գումարը փոխանցել ստորեւ նշված հաշվեհամարին՝ նշելով ծառի անվանատիրոջ լրիվ ու ճշգրիտ անունը, ազգանունը, հայրանունը եւ ծննդյան տարեթիվը:

FOR EURO TRANSFERS

BENEFICIARY	**GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMILY FOUNDATION OF KASHATAGH**
TAX IDENTIFICATION NUMBER	**01533651**
ACCOUNT NUMBER	**2473800074730010**
BENEFICIARY'S BANK:	**ARDSHINBANK KASHATAGH BRANCH** **SWIFT Code: ASHBAM22**
ADDRESS:	**13 G.LUSAVORICH St.,** **Yerevan, ARMENIA**
INTERMEDIARY BANK:	**CORR.ACCOUT: 100-947721700** **Deutsche BANK AG, Frankfurt am Main** **SWIFT Code: DEUTDEFF**
TRANSFER DETAILS	**ASSISTANCE TO COW, TREE, STUDENT, BOOK PROGRAM**

FOR USD TRANSFERS

BENEFICIARY	**GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMILY FOUNDATION OF KASHATAGH**
TAX IDENTIFICATION NUMBER	**01533651**
ACCOUNT NUMBER	**2473800074730001**
BENEFICIARY'S BANK:	**ARDSHINBANK KASHATAGH BRANCH , ARMENIA** **SWIFT Code: ASHBAM22**
ADDRESS:	**13 G.LUSAVORICH st.,** **Yerevan, ARMENIA**
INTERMEDIARY BANK:	**Deutsche Bank Trust** **Company Americas** 60 Wall Street, New York, NY 10005 BKTRUS33
TRANSFER DETAILS	**ASSISTANCE TO COW, TREE, STUDENT, BOOK PROGRAM**

Գումարի փոխանցման դեպքում խնդրում ենք տեղյակ պահել հետեւյալ հասցեով[a]

Republic of Armenia, Ye r e v a n, Ave. MKHITAR HERATSI, no. 16, flat 48, G. MELIKYAN.

Tel. (37410) 57-60-73

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝ ԱՎԱԳՅԱՆ Ա, բ. գ. դ., պրոֆեսոր

ՄԵԼԻՔՅԱՆ Գ, բ. գ. թ., պրոֆեսոր

ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ, պ. գ. թ,, պրոֆեսոր

Համարի նյութերը , շարվածքը , լուսանկարները և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:

Տպաքանակը՝ 99:

Թերթը բաժանվում է անվճար:

Խմբագրության հասցեն՝

Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ:

Հեռ.՝ 060 710 629, 055 – 52 - 29 – 36,

55 - 25 – 37, 52 - 29 – 36: